

375025, Երեւան, Հայաստանի Հանրապետություն
Չարենցի 1, 2-րդ հարկ
Հեռ.՝ + [374] (10) 57 45 01
Հեռ./ ֆաքս՝ + [374] (10) 57 52 19
E-mail: caa@caa.am, info@caa.am, press@caa.am
<http://www.caa.am>
<http://www.lgassociations.info>

ԺՁ ՄՁ ռի շ ՍԷ
ԺՁ ՅՁ ՍՍ ՅՍ Օ ՃԷ
ՅԷ à ô Æ Û à ô Û

Մամլո հաղորդագրություն

06-ը հուլիսի, 2005թ., թիվ 40:

ՏԻՄ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անցած ամիսների ընթացքում մամուլը եւ քաղաքական դաշտի բազմաթիվ ներկայացուցիչներ հանդես են եկել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում մարզ առ մարզ անցկացնելու առաջարկությամբ: Մասնավորապես, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Գարեգին ԱԶԱՐՅԱՆՆ առաջարկել էր ՏԻՄ ընտրությունները սկսել Երեւանում սեպտեմբերին, իսկ մարզերում հոկտեմբերին:

ՏԻՄ ընտրությունների օրվա հետ կապված հարցադրումներ ենք ստացել բազմաթիվ լրագրողներից, որի կապակցությամբ ներկայացնում ենք հետեւյալ պարզաբանումները:

ՀՀ Ընտրական օրենսգիրքը սահմանում է տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունն նշանակելու, անցկացնելու եւ թեկնածուներ առաջադրելու ու գրանցելու ժամկետները: Ըստ որի՝

«1. Տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրություններն անցկացվում են ոչ ուշ, քան տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ավարտից **30 օր առաջ**:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները նշանակում է համապատասխան մարզպետը՝ համայնքի ղեկավարի լիազորությունների ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան **90 օր առաջ**»:

Հարցի կապակցությամբ պարզաբանում է տվել նաեւ Հայաստանի համայնքների միության վարչության համակարգող, Եվրոպայի խորհրդի Տեղական ու տարածքային իշխանությունների կոնգրեսում Հայաստանի պատվիրակության ղեկավար Էմին

ԵՐԻՑՅԱԼԸ (վերջինս Եվրոպայի Խորհրդի կողմից տարբեր երկրներում բազմաթիվ ընտրությունների դիտորդական առաքելություն է իրականացրել):

«Սովորաբար ընտրությունները տարբեր օրեր անցկացվում են միայն այն երկրներում, ուր ընտրական համակարգը նախատեսում է ընտրությունների երկրորդ փուլ:

Տեղին չէ փաստարկը, որ ընտրությունները մարզ առ մարզ անցկացնելու պարագայում կբարձրանա ընտրությունների կազմակերման ադմինիստրատիվ որակը: Հակառակը՝ ընտրություններում պետք է նվազագույնի հասցվի ադմինիստրատիվ միջամտության հնարավորությունը:

Ընտրությունները մարզ առ մարզ անցկացնելը կոժվարացնի նաեւ բուն դիտորդական առաքելության իրականացումը:

Կարծում եմ, Հայաստանում ՏԻՄ ընտրությունները մարզ առ մարզ անցկացնելու գաղափարը չի խրախուսվի դիտորդների կողմից:

Հայաստանում տեղական ինքնակառավարման մարմինների անցած բոլոր ընտրությունները կազմակերպվել են միասնական եւ դրանք դրական են գնահատվել միջազգային դիտորդական առաքելությունների կողմից: Մենք պետք է պահպանենք այս միտումը: Ուստի ՀՀ Կառավարությանը եւ մարզպետներին ՏԻՄ ընտրությունների մեկ միասնական օր նշանակելու կոչ եմ անում»:

**ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ
ՄԱՍՈՒԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺԻՆ
Հեռ.՝ 010 574501, Ֆաքս/հեռ.՝ 010 575219
e-mail: press@caa.am**